



«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Գործնական աշխատանքների
իրականացումը առարկայի
դասավանդման ընթացքում

Առարկան՝ Աշխարհագրություն

Հետազոտող ուսուցիչ՝ Վարդուշ Մարգարյան

Ուսումնական հաստատություն՝ ՀՀ Արագածոտնի մարզի
«Թաթուլի Թ. Կրպեյանի
անվան միջնակարգ դպրոց»
ՊՈԱԿ

Երևան 2022

Բովանդակություն

Ներածություն-----	3
Գործնական աշխատանքների իրականացումը առարկայի դասավանդման ընթացքում-----	4
Եզրակացություն-----	14
Օգտագործված գրականության ցանկ-----	15

Ներածություն

Թեմայի կարևորությունը: Գործնական աշխատանքները կազմակերպվում և իրագործվում են լայնածավալ թեմաներ ուսումնասիրելուց հետո: Դրանք կրում են ընդհանրացնող բնույթ: Վարժություններն իրենց բնույթով բաժանվում են բանավոր, գրավոր, գրաֆիկական, ուսումնական-աշխատանքային վարժությունների, գործնական աշխատանքների: Դրանցից յուրաքանչյուրն իրականացնելիս սովորողները կատարում են մտավոր և գործնական աշխատանք, որոնք փոխկապակցվում են՝ կանխանշած նպատակին հասնելու համար: Սրանք կատարվում են ուսումնական բոլոր առարկաներից, ուսուցման գործընթացի բոլոր փուլերում: Բոլոր տեսակի 3 վարժությունների բնույթը և մեթոդիկան կախում ունի տվյալ ուսումնական առարկայի առանձնահատկություններից:

Թեմայի նպատակը: Ուսումնասիրել գործնական աշխատանքների իրականացումն առարկայի դասավանդման ընթացքում:

Գործնական մեթոդը կարելի է իրագործել հետևյալ հնարների գործադրմամբ.

- առաջադրանքի պլանավորում,
- առաջադրանքի կատարում,
- կատարման ընթացքի խթանում,
- վերահսկողություն,
- կատարված գործնական աշխատանքի արդյունքների վերլուծություն, թերությունների, սխալների հայտնաբերում:

Ուսուցողական բնույթի գործնական առաջադրանքները կոչված են նպաստելու հենց դասի ընթացքում տեսական նյութի յուրացմանը և կարող են օժանդակել աշակերտին ինքնուրույն հանգել տեսական այն հետևություններին, որոնց մասին խոսք է գնում ուսումնական թեմայում: Որպես կանոն, դրանք առաջադրվում են դասարանի բոլոր աշակերտներին և ուսուցչի կողմից պարտադիր ուղղորդման կարիք են զգում: Դրանք գնահատման ենթակա չեն:

Գործնական աշխատանքների իրականացումը առարկայի դասավանդման ընթացքում

Անժխտելի է, որ ճանաչողության հիմքը պրակտիկան է: Ուստի աշակերտ-ներին պետք է հասկանալի դարձնել այն, որ տեսական հետազոտությունները կատարվում են ոչ միայն հանուն գիտության, այլև հանուն պրակտիկ գործունեության զարգացման, հանուն մարդկանց կենսապայմանների ապահովման և բարելավման: Պրակտիկայում առաջադրված խնդիրներն են, որ լուծվում են տարբեր գիտությունների միջոցով: Ավելին, այդ խնդիրների գիտական լուծումները փորձարկվում և ներդրվում են պրակտիկայում: Աշակերտին պետք է հասկանալի դարձնել տեսական հասկացությունների իմացության կարևորությունն ու նշանակությունը մարդու պրակտիկ գործունեության մեջ: Նա պետք է հասկանա, թե որքան կարևոր է ձեռք բերած տեսական գիտելիքները կյանքում հանդիպող առօրյա իրադրություններում կիրառել կարողանալը:

Աշակերտների մեջ նման կարողության (գործնական կարողության) առկայությունը նրանց իսկ կրթվածության (ուսումնառության) որակի հիմնական և գլխավոր ցուցանիշն է լինելու ողջ կյանքում: Այդ իսկ պատճառով շատ կարևոր է, որ ուսուցիչը ուսումնական գործընթացը կազմակերպելիս և իրականացնելիս հիմնական շեշտը դնի նաև աշակերտների մեջ գործնական կարողությունների ձևավորման և զարգացման հարցերի վրա: Հենց այս տեսանկյունից է, որ արժևորվում է գործնական աշխատանքի դերը՝ ոչ միայն որպես տեսական նյութի ամրապնդման միջոցի, այլև որպես սովորածը գործնականում կիրառելու հնարավորության: Կոնկրետ խնդիրներով ու բովանդակությամբ պայմանավորված, գործնական աշխատանքները կարող են իրականացվել ինչպես դասերի ժամանակ, այնպես էլ դասերից դուրս: ¹

Ուսումնական առարկայի բովանդակության առանձնահատկություններով են պայմանավորվում տեսության և պրակտիկայի կապերի ձևերը: Այդ կապերը բացահայտելու տրադիցիոն միջոց են (նաև գործնական աշխատանքի տեսակ)

¹ Հանրակրթության պետական կրթակարգ: Միջնակարգ կրթության պետական չափորոշիչ. – Եր., <<Անտարես>>, 2004

էքսկուրսիաները, զանազան լաբորատոր աշխատանքները, որոշակի պրակտիկ գործողությունների իրականացում պահանջող հանձնարարություններն ու առաջադրանքները (իրերի և նրանց մոդելների պատրաստում, կենցաղային իրավիճակներում հաշվարկների կատարում, բնական որևէ երևույթի դիտում ու մեկնաբանում և այլն): Գործնական աշխատանքները կազմակերպելիս չպետք է անտեսել նաև աշակերտների ունեցած անձնական փորձը: Գործնական աշխատանքներն արդյունավետ իրականացնելու համար ուսուցիչը պետք է

- նախապատրաստական աշխատանք տանի աշակերտների հետ, որպեսզի նրանք ոչ միայն իմանան տեսական այն նյութը, որի հիման վրա պետք է կատարեն գործնական աշխատանքը, այլև ծանոթ լինեն այն իրականացնելու հնարներին ու միջոցներին,
- ապահովի աշակերտներին գործնական աշխատանքն իրականացնելու համար անհրաժեշտ միջոցներով (ուսումնական օժանդակ նյութ, մոդելներ, գործիքներ, սարքեր և այլն),
- վերահսկի աշխատանքի կատարման ընթացքը, անհրաժեշտության դեպքում ինքը ևս ներգրավվի այդ աշխատանքում,
- վերլուծի և գնահատի կատարված աշխատանքը²

Սկզբնական փուլում ցանկալի չէ փորձել իրականացնել գործնական աշխատանքների բարդ տեսակներ. պետք է պարզ աշխատանքների իրականացումից աստիճանական անցում կատարել դեպի բարդերը: Նման մոտեցումը կօժանդակի աշակերտների մեջ պարզագույն այնպիսի հմտությունների ձևավորմանը, որոնք անհրաժեշտ են լինելու առավել բարդ առաջադրանքներ կատարելիս՝ ընդհուպ ինքնուրույն որոշակի հետազոտական աշխատանքների ժամանակ:

Աշխարհագրության գործնական աշխատանքներն իրենց էությամբ, բնույթով և նպատակով մոտ են ուսումնական մյուս առարկաների լաբորատոր աշխատանքներին: Աշխարհագրության գործնական առաջադրանքները կարելի է

² Львов М. Р. Школа творческого мышления.- М., Дидакт, 2008

հանձնարարել ինչպես թեմայի ուսուցումը սկսելուց առաջ, այնպես էլ թեմայի (տեսական նյութի) ուսուցումն ավարտելուց հետո:

Յուրաքանչյուր գիտություն զարգացման ընթացքում ստեղծել ու մշակել է իր ուսումնասիրման մեթոդների համակարգը: Այդպիսի գիտությունների շարքին է դասվում նաև աշխարհագրությունը: Թեև ներկայում աշխարհագրությունն ունի հետազոտման իր ժամանակակից մեթոդները (արերոտիեզերական հանույթ, վիճակագրական, մաթեմատիկական մոդելավորման), սակայն դեռևս արդիական են մնում այն մեթոդները, որոնք առաջացել են նրա առաջացման հետ՝ նկարագրական, դաշտային-արշավախմբային, քարտեզագրման:

Նշած մեթոդներից մի քանիսը լայնորեն կիրառում են նաև դասավանդման պրոցեսում:³

Օրինակ աշխարհագրության դասավանդման մեջ իրականացնում են դաշտային հետազոտության մեթոդը, հիմա կփորձենք անդրադառնալ քարտեզագրման և քարտեզների ընթերցման մեթոդների կիրառմանը ուսումնական պրոցեսում:

Ընդհանրապես քարտեզագրման մեթոդը համարվում է աշխարհագրության ուսումնասիրության հնագույն մեթոդներից մեկը: Պատահական չէ, որ քարտեզը համարվում է նաև աշխարհագրության լեզուն: Տարածված ևս մեկ տեսակի համաձայն՝ ցանկացած քարտեզագրվող երևույթ չէ, որ աշխարհագրական է, սակայն աշխարհագրական ցանկացած երևույթ կարող է քարտեզագրվել:

- Ի՞նչ է տալիս սովորողին ուսումնական քարտեզագրումը:
- Սովորեցնում է աշխատել տարբեր բովանդակության քարտեզների հետ:
- Ջարգացնում է սովորողի տարածական պատկերացումը:
- Ջարգացնում է աշխարհագրական մտածողությունը և աշխարհագրական մշակույթը:

Ուսումնական աշխատանքի ընթացքում սովորողները ծանոթանում են տարաբնույթ երևույթների հետ, որոնք սովորաբար մատուցվում են արդեն պատրաստի քարտեզների հետ, սակայն սովորողը երևույթն ավելի լավ է

³ Հանրակրթական հիմնական և ավագ դպրոցների չափորոշիչներ և ծրագրեր / Աշխարհագրություն. – Եր., <<ԿՕԿ>> ԾԻԳ, 2007

պատկերացնում ու ընկալում, երբ փորձում է դա պատկերել սեփական քարտեզի վրա:

Աշակերտի ձեռք բերած գիտելիքը հիմնավոր և օգտակար է այնքանով, որքանով նա կարող է դա կիրառել: Այդ գիտելիքի կիրառության կարողությունը զարգացնելու նպատակով նախատեսվում են գործնական աշխատանքներ: Ելնելով ուսումնական առարկայի առանձնահատկություններից՝ գործնական աշխատանքները կարող են լինել տարբեր՝ տեղանքում կողմնորոշվելու, գործիքով աշխատելու կարողություն, լաբորատոր պայմաններում փորձ, տեսական կիրառություն կամ մոդելավորում, մակետի կազմում և նոր տեխնոլոգիաների յուրացում, որոշակի ձևաչափով գրության կազմում, ֆիզիկական պատրաստվածություն, մշակույթ, կենցաղ և այլն: Կիրառություններից առանձնահատուկ արժեք ունի միջառարկայական կապերի խթանումը: Գործնական աշխատանքը կարող է արվել և՛ դասաժամի ընթացքում, և՛ դասից դուրս: ⁴

Այս ուսումնական տարում ևս տարրական դասարանների ուսուցիչներին սպասում են հրատարակչական մի շարք նորույթներ, որոնց մասին պարբերաբար կարող են տեղեկանալ «Նախաշավիդ» ամսագրի «Գրքեր ձեզ համար» ենթավերնագրի ներքո զետեղված տեղեկատվությունից: Կներկայացնենք դրանցից միայն մեկը, որը և՛ կառուցվածքային, և՛ բովանդակային առումով նորություն է: Գործը վերնագրված է՝ «50 հարց ու պատասխան տարրական դասարանների ուսուցիչներին»: Աշխատանքն ընդգրկում է հինգ թեմա, որոնք վերաբերում են ժամանակակից դասին, մայրենիի ուսուցման գործընթացին, խմբային աշխատանքներին, տնային հանձնարարություններին և աշակերտների ուսումնական թղթապանակներին:

Առաջին դասարանում դասավանդող ուսուցիչներն այս տարի հնարավորություն կունենան ձեռք բերելու ծրագրի՝ «Խոսք և հաղորդակցում» ենթաբաժնի պահանջներին վերաբերող ուսուցչի ձեռնարկը և համապատասխան աշխատանքային տետրերը:

⁴ Лийметс Х. И., Групповая работа на уроке. -М., Знание, 2010

Սովորելը խթանելու արժեքավոր միջոց է նաև տնային աշխատանքը: Չնայած հարցմանը մասնակցած դասավարների 22%-ն էր նշել ուսման որակի բարձրացման վրա վերջինիս արդյունավետության մասին, սակայն այն ևս կարևոր դեր ունի ուսումնառությունը խթանելու գործում: Սովորողների գիտելիքների յուրացման և գործնական հմտությունների ձևավորման գործընթացն առավել արդյունավետ է, երբ դասի ընթացքում ձեռք բերված գիտելիքներն ամրակայվում են սովորողի հետագա մտագործունեությամբ, նրանց կողմից նորի իմաստավորմամբ և կիրառմամբ:⁵

Գիտելիքը կենսունակ է դառնում այն ժամանակ, երբ այն կիրառվում, զարգացվում և խորացվում է: Հետևաբար հանձնարարվող տնային աշխատանքը պետք է ապահովի ուսումնասիրված նյութի գործնական կիրառումը: Տնային աշխատանք հանձնարարելիս կարելի է ցուցաբերել տարբերակված մոտեցում, քանի որ յուրաքանչյուր սովորող գիտելիքը յուրացնում է իր մտավոր կարողություններին և հմտություններին համապատասխան: Տնային աշխատանքի կատարման շուրջ հաճախակի պետք է կազմակերպել քննարկումներ և վերլուծություններ, որոնք կօգնեն սովորողներին լավ յուրացնել ուսումնական նյութը և շտկելու նկատված թերություններն ու բացթողումները:

Գործնական են սովորողների այն ինքնուրույն աշխատանքները, որոնց կատարման նպատակը տեսականորեն ապացուցված փաստերի, հարաբերակցությունների, առանձին կոնկրետ դեպքերի կախվածությունների ստուգումն է, գործնականում տեսական գիտելիքների կիրառումն է, գործնական խնդիրների լուծումը և այլն: ⁶

Լաբորատոր աշխատանքները չեն կարող անմիջականորեն փոխարինել գործնական աշխատանքներին: Ընդհակառակը, ապահովում են վերջիններիս կատարման համար լավ պատրաստվածություն: Գործնական աշխատանքների կատարման ընթացքում մաթեմատիկական տեսությունը կիրառվում է իրական տարածական ձևերով և քանակական հարաբերություններով, ոչ թե արհեստական

⁵ Львов М. Р. Школа творческого мышления.- М., Дидакт, 2008

⁶ Հանրակրթության պետական կրթակարգ: Միջնակարգ կրթության պետական չափորոշիչ. – Եր., <<Անտարես>>, 2004

ստեղծված մոդելներով, այդ պատճառով էլ մանկավարժության տեսանկյունից արժեքավոր է: Ահա թե ինչու մաթեմատիկայից գործնական աշխատանքների կատարումը պետք է միանգամայն պարտադիր լինի յուրաքանչյուր դասարանում:

Լաբորատոր աշխատանքները գործնական աշխատանքների կատարման անհրաժեշտ նախապատրաստական փուլն են, սակայն լաբորատոր աշխատանքները գործնականների նկատմամբ ունեն մի շարք առավելություններ, որոնք էլ դրանք դարձնում են ուսուցման գործընթացի տեսանկյունից առավել արժեքավոր.

1. առավել հեշտ են իրականացվում (դասարանում, դասի ժամանակ),
2. հեշտ են և հասանելի սովորողների ըմբռնմանը և այն մեծությունների պարզեցմանը, որոնք անհրաժեշտ են դրված խնդրի լուծման համար,
3. պահանջում են ավելի քիչ ժամանակ, քան գործնականները,
4. աշխատանքների նախնական անցկացումը, համապատասխան գործնական աշխատանքից առաջ, նպաստում է բոլոր սովորողների ակտիվացմանը և լավագույնն է պարզաբանում մաթեմատիկայի դերը գործնական խնդիրներ լուծելիս,
5. անցկացման ընթացքում առավել հեշտ է ապահովել բոլոր մասնակիցների ինքնուրույն աշխատանքի կատարումը:⁷


Գործնական աշխատանքի օրինակ աշխարհագրություն առարկայից

1.Թվարկել Արևելյան Ասիայի և Հարավային Ասիայի երկրները իրենց մայրաքաղաքներով:

Արևելյան՝ Չինաստան (Պեկին), Ճապոնիա (Տոկիո), Կորեա (Փեմյան, Սեուլ), Թայվան (Թայբեյ), Մոնղոլիա (Ուլանբատոր):

Հարավային՝ Բուրան (Թեհրան), Շրի Լանկա (Կոտե), Հնդկաստան (Նյու Դելի), Պակիստան (Իսլամաբադ), Նեպալ (Կատմանդու), Մալդիվներ (Մալե), Բանգլադեշ (Դաքքա):

⁷Лийметс Х. И., Групповая работа на уроке. -М., Знание, 2010



2.Նկարագրել Չինաստանի և Ճապոնիայի աշխարհագրական դիրքի առանձնահատկությունները:

Չինաստան՝

Աշխարհագրական դիրքը կարելի է գնահատել երկու տեսանկյունից՝

Առաջին այն չափազանց հեռու է գտնվում Եվրոպական երկրներից, նույնիսկ Ռուսաստանի մայրաքաղաքից մեկ շաբաթվա ընթացքում է կարելի հասնել գնացքով:

Երկրորդ ծովային դիրքը շատ նպաստավոր է:

Օգտակար հանածոներից են՝ ածուխ, նավթ, երկաթ, ալյումին , մանգան, սնդիկ և մոլիբդեն, պղինձ, ցինկ, կապար, ուրան:

Ճապոնիա՝

Ճապոնիան ծովային պետություն է, մեծ տարածքի պատճառով կլիմայական պայմանները տարբեր են: Հարևանների հետ ունի չլուծված հարցեր և Ռուսաստանից պահանջում է Հարավկուրիլյան կղզիներից չորսը:

Ճապոնիայի ամենաբարձր կետը Ֆուդզիյամա գործող հրաբուխն է: Հաճախակի կատարվող հրաբուխները մեծ վնաս են հասցնում տնտեսությանը: Հարթավայրերը քիչ են:

Ճապոնիայի տարածքում կան բազմաթիվ օգտակար հանածոներ, սակայն դրանց պաշարները քիչ են, դրանցից համեմատաբար մեծ են են՝ պղնձի, տիտանի, մանգանի, ուրանի, ցինկի, կառլինի պաշարները:

Երկրի մեծ մասում կլիման բրենպաստ է գյուղատնտեսության համար: Երկրի ջրային ցանցը խիտ է: Գերակշռում են սահանքավոր և ջրառատ գետերը, որոնք օգտագործվում են ոռոգման և էլեկտրաէներգիա ստանալու նպատակով:

3. Համառոտ բնութագրել Հնդկաստանի աշխարհագրական դիրքը և զարգացման բնական նախադրյալները:

Տարածքի մեծությունը աշխարհում յոթերորդն է: Երկրում ցամաքային հատվածը երկու անգամ ավելի մեծ է քան ծովային, սակայն տնտեսությունում ավելի մեծ դեր է խաղում ծովափը:

Հնդկաստանը գտնվում է Արաբական և Բենգալյան ծոցերի միջև, դրա հետևանքով երկրի ավերով են անցնում հնդկական օվկիանոսի բանուկ ուղիները և տարածքով անցնում են նաև օդային հաղորդակցության շատ ուղիներ:

Ավելի քան մեկ դար Հնդկասանը Մեծ Բրիտանիայի գաղութն էր և 1947թ. այն անկախացավ, սակայն կրոնական, ազգային, քաղաքական և այլ առումներով բաժանվեց ժամանակակից հնդկաստանի և պակիստանի:

Հնդկաստանը դաշնային հանրապետություն է, որը կազմված է 28 նահանգից և միութենական 7 տարածքից:

Կարծում եմ Հնդկաստանում պետք է զարգացնել կրթությունը, քանի որ այնտեղ մարդիք քիչ են կրթված և շատ աղքատ են, նաև պետք է զարգացնել մեքենաշինությունը, քանի որ մեքենաշինությունը Հնդկաստանում շատ թույլ ճյուղ է:

Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական աշխատանքների և իրավիճակային խաղերի միջոցով: Թեստերի միջոցով ստուգվում է համագործակցությունը խթանող միջոցառումների իմացությունը, և կոնկրետ դեպքերի համար դրանց կիրառման առավել նպաստավոր տարբերակները: Կհանձնարարվի հավաքագրել որոշակի գործընկերոջ վերաբերյալ տեղեկատվություն և օգտագործել գործարար հաղորդակցում ձևավորելու համար: Կառաջադրվի իրավիճակային խաղեր՝ գործնական հաղորդակցում նախաձեռնելու, համագործակցության հասնելու և հետադարձ կապ ապահովելու համար: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր, մասնավորապես՝ հարց ու պատասխանը, թեստերը, նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից:

Գործնական աշխատանքը աշակերտի ինքնուրույն գործնետության տեսակ է, որը հնարավորություն է տալիս զարգացնել ինքնուրույն ճանաչողական մտածողությունը: Կրթության գլխավոր նպատակը ոչ միայն գիտելիքներ տալն է, այլ նաև դրանք գործնականում կիրառել կարողանալը: Աշակերտը պետք է կարողանա կատարել իրեն տրված առաջադրանքը, դնի կոնկրետ նպատակ , գտնի դրանք լուծելու ճանապարհ, պլանավորի իր անելիքը, ստանա արդյունք և կատարի եզրահանգում:

Գործնական աշխատանքների ժամանակ աշակերտը պետք է ընտրության հնարավորություն ունենա, կարողանա ինքնուրույն առաջադրանքներ կատարի ,որը խթանում է աշակերտի ստողծագործական մտածողությունը, հմտությունը, երեւակայությունը, իմացական հետաքրքրությունը:⁸

Խմբային գործնական աշխատանքն ավելի արդյունավետ է դարձնում ուսուցման գործընթացը՝ նպաստելով սովորողների համագործակցային և հաղորդակցական կարողությունների զարգացմանը: Խմբային գործնական աշխատանքները աշակերտի մոտ զարգացնում են կարևոր մարդկային հատականիշներ՝ համագործակցել, լսել և հարգել դիմացինի կարծիքը, պատասխանատվություն կրել խմբի համար: Նման գործնական աշխատանքների մասին կարծիքս դրական է: Նույնիսկ ամենաթույլ

⁸ Лийметс Х. И., Групповая работа на уроке. -М., Знание, 2010

աշակերտը թեկուզ փոքր, բայց որոշակի ներդրում կունենա տրված առաջադրանքը կատարելու համար:⁹

Ինչպես գիտենք՝ ձևավորող գնահատման հիմնական նպատակը ուսուցման և ուսումնասիրության բարելավումն է, ինչը հնարավոր է սովորողի՝ սեփական կրթության մեջ ակտիվ դերակատարում ունենալու պարագայում: Մասնակիցը լինելով սեփական ուսումնասիրության պլանավորման, իրականացման և վերլուծության փուլերին՝ սովորողը նպատակային սովորում է սովորել:

⁹ Հանրակրթական հիմնական և ավագ դպրոցների չափորոշիչներ և ծրագրեր / Աշխարհագրություն. – Եր., <<ԿՕԿ>> ԾԻԳ, 2007

Եզրակացություն

Ուսուցիչները հաճախ կիրառում են աշակերտների ակտիվությունը խթանող հնարներ, և համարում են, որ իրենք կազմակերպեցին ինքնուրույն աշխատանք: Անկասկած, այդ հնարների կիրառմամբ նրանք սովորեցնում են աշակերտներին ինքնուրույն աշխատել, բայց այն դեռ ինքնուրույն աշխատանք չէ:

Նախ տեսնենք, թե ինչ են իրենցից ներկայացնում ինքնուրույնություն և ինքնուրույն աշխատանք արտահայտությունները: Ինքնուրույնությունը անհատի անձնային որակ է, իսկ ինքնուրույն աշխատանքը՝ ուսումնական աշխատանքի ձև:

Ինքնուրույնության և ինքնուրույն աշխատանքի միջև գոյություն ունի սերտ կապ: Ինքնուրույն աշխատանքը մի կողմից արդեն ձեռքբերված ինքնուրույնության արտահայտումն է, մյուս կողմից՝ ինքնուրույնության զարգացմանը նպաստող միջոց: Այսինքն՝ ինքնուրույն աշխատանքը նպաստում է ինքնուրույնության ձևավորմանը՝ որպես անհատ որակ: Ինքնուրույն աշխատանքները զարգացնում են սովորողների տրամաբանությունը, ճանաչողությունն ու ակտիվությունը:

Կարելի է ասել, որ ինչպես դպրոցում, այնպես էլ ողջ կյանքի ընթացքում սովորողների ինքնուրույն աշխատանքի ընթացքում են զարգանում գիտելիքների յուրացման գործընթացն իրականացնող ճանաչողական կարողություններն ու հմտությունները:

Գաղտնիք չէ, որ արդի ժամանակաշրջանում տարրական և միջին դասարաններում ուսումնասիրության միջև գոյություն ունի անջրպետ: Այս երևույթի պատճառները բավականին շատ են, սակայն դրանցից մեկն էլ կարելի է համարել տարրական դասարաններում դասավանդող ուսուցիչների՝ կրտսեր դպրոցականների ինքնուրույն աշխատանքի հմտությունների ձևավորման վրա ոչ բավարար ուշադրության պակասը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Հանրակրթության պետական կրթակարգ: Միջնակարգ կրթության պետական չափորոշիչ. – Եր., <<Անտարես>>, 2004
2. Հանրակրթական հիմնական և ավագ դպրոցների չափորոշիչներ և ծրագրեր / Աշխարհագրություն. – Եր., <<ԿԾԿ>> ԾԻԳ, 2007
3. Лийметс Х. И., Групповая работа на уроке. -М., Знание, 2010
4. Львов М. Р. Школа творческого мышления. - М., Дидакт, 2008